ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ Ներք/615

«22» 02 2021թ.

«Պահապան» ՍՊԸ (ՀՎՀՀ 00882372) տնօրեն
Վ. Մելիք-Սարգսյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Քուչակի 16/22
էլ. հասցե՝ 0507200069@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրին կից 31.03.2020թ. կնքված N 3 համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում պետք է մատակարարեր՝

630 հատ Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ, որից չի մատակարարել 415 հատ,
630 հատ Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ, որից չի մատակարարել 385 հատ,
300 հատ Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ ՌՈ, որը չի մատակարարել,
300 հատ Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ ՌՈ, որը չի մատակարարել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը վերը նշված ապրանքատեսակների մասով /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 11.02.2021թ. թիվ ՍՑ-ՆԳ-2021/31 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարի 19-ին միակողմանի մասնակի լուծել է նաև N ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագիրը վերը նշված ապրանքատեսակների մասով՝ հիմք ընդունելով N ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները:

Եթե 22.01.2021թ. ՆՏՍ/196 ծանուցմամբ սահմանված ժամկետում և կարգով «Պահապան» ՍՊ ընկերությունը չի կատարել տույժերի և պայմանագրի կատարման ապահովման տուժանքի հետ կապված պարտավորությունները, ապա տեղեկացնում եմ, որ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 291 135 ՀՀ դրամ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 781 326 ՀՀ դրամ որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում:

Ն. ՅՈԼՉՅԱՆ